ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1962 Общественные науки

Արման Կոթիկյան

ԴՊՐՈՑԱ-ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ (1815—1915)

Մեր թատերագետները հետազոտական լուրջ աշխատանք չեն կատարել (և չեն կատարում) Պատմահայաստանի գլխավոր քաղաքներում (ասենք Կարնում, Վանում, Մշում, Խարբերդում, Երզնկայում և այլն), ապա դրանցից դուրս նաև մի շարք հայաշատ գաղթավայրերում առավել կամ նվազ չափով իր գոյությունը զգացնել տված դպրոցա-թատերական կյանքի պատմությունն ուսումնասիրելու ուղղությամբ և բավականացել են խոսելով միայն Պոլսի և մասամբ էլ Զմյուռնիայի թատերական խմբերի գործունեության մասին։

Ճիշտ է, որ Պոլիսը և Զմյուռնիան եղել են արևմտահայերի մշակութային խոշոր կենտրոնները, սակայն, անտարակուսելի է, որ գավառի թատերական կյանքի ուսումնասիրությունը նույնպես ոչ-նվազ օգտակար դեր կարող է կատարել հայ թատրոնի պատմության էջերը հարստացնելու և ամբողջացնելու տեսակետից։

Այս իսկ պատճառով հետաքրքրական է գավառական կարևոր գաղթավայրերից մեկի՝ Տրապիզոնի դպրոցա-թատերական մշակույթի պատմության ուսումնասիրությունը։

* * *

Տրապիզոնի հայերը մեծ մասամբ գաղթել են Համշեն (կամ Համաշեն) կոչված հայաշատ գավառից։

17-րդ դարի վերջերին Համշենում օսմանցիների կողմից հայերի հանդեպ գործադրվում էին կրոնական սուր հալածանքներ։ Հազարավոր հայեր նահատակվում էին, ուրիշներ՝ կրոնափոխ արվում, ոմանք էլ սարերում և անտառներում ապաստանած փախստականի կյանք վարում, սակայն, վերջիվերջո, չկարողանալով դիմադրել անլուր դժվարություններին, հարկադրված են լինում լեռնային ճանապարհներով իջնել դեպի ծովեզերք՝ նախ Տրապիզոն, ապա նաև դեպի հարավ՝ Ռիզե, Սյուրմենի, Գարադերե և այլ քաղաքները՝ Սուխում, Սոչի, Կտաուտ և այլն։

1800-ական թվականների սկզբում հայերը Տրապիզոնում արդեն կազմում են 250—300 ընտանիք, այլ խոսքով մոտ 1500 մարդ, չհաշված շրջակա գյուղերի նույնքան բնակչությունը։ Այդ ժամանակաշրջանում էլ Տրապիզոնի հայ համայնքի ծոցում նոր-նոր սկզբնավորվում է մշակութային կյանքը, դրա հետ միաժամանակ նաև թատերարվեստը։

Թատերական արվեստի սաղմնավորումը հայերի (և ոչ միայն հայերի) մեջ տեղի է ունեցել դպրոցական ներկայացումների ճանապարհով։ Այդ նույն ուղիով է ընթացել նաև Տրապիզոնի թատերական արվեստի պատմությունը։ 800-ական թվականների սկզբում հայ լուսավորչական համայնքի ջանքերով

քաղաքում արդեն բացվել էր առաջին ազգային վարժարանը, ուր սովորում էին հայ ընտանիքների երկսեռ զավակները։

Կարճ ժամանակից հետո պահանջ զգացվեց բացելու մի վարժարան ևս։ Դրա նախաձեռնությունն ստանձնել էին համայնքի կաթոլիկ հայերը, որոնք 1817 թ. Պոլսից հրավիրում են Մինաս Բժշկյանին։

Ծագումով տրապիզոնցի այս մխիթարյան վարդապետը, 1810 թ. սկսած ինը տարի շարունակ, Պոլսում, Պերայի Ս. Գևորգ Մխիթարյան վարժարանի տնօրինությունն է վարել՝ արժանանալով անվերապահ գնահատականի։ Բժշկյանը հայտնի է նաև որպես առաջին հայ դրամատուրգներից մեկը, որի հեղինակությանն է պատկանում «Արտաշես» պատմական ողբերգությունը, ինչպես նաև մի քանի փոքրիկ զավեշտներ՝ գրված աշխարհաբարով։ Բժշկյանն է, որ Պոլսում իր ղեկավարած դպրոցի շրջանավարտ սաների մասնակցությամբ առաջին անգամ կազմակերպում է մի քանի ներկայացումներ, որոնք կրկնվել են դպրոցից դուրս էլ, Գուրու-Չեշմեի Տյուզյանների ապարանքում։ Բժշկյանի ղեկավարած դպրոցում կայացած առաջին ներկայացման հանդիսատեսներից մեկն ականատեսի իր հիացական տպավորություններն է արտահայտում բարեկամին գրած իր մի նամակի հետևյալ տողերով. «Բարեկենդանին Հ. Մինաս վարդապետը յուր դպրատանը մեջ տղոցը «Արտաշեսի պատմությունը» խաղցուց. որչափ մարդ կար ամենքը զարմացան, թե հայոց մեջ ասանկ բան մը կըլլա եղեր. և ճշմարիտը նոր բան մը տեսանք»[1]։

Ընդառաջելով Տրապիզոնի հայ-կաթոլիկ համայնքի ցանկությանը և հրավերին, Հ. Մինաս Բժշկյանը Պոլսից մեկնում է Տրապիզոն։ Տեղ հասնելով, նա մեծ ջանասիրությամբ լծվում է նախ և առաջ դպրոցի շենքի կառուցման աշխատանքին։ Այդ մասին 1817 թ. հուլիսի 27-ին գրած իր մի նամակում կարդում ենք. «Դպրատունն է ի ժամատան, և մանկունքն 60, զոր սկսանք շինել ի հիմունս։ Խորհիմ ի վերա դպրատան կրկին սենյակս շինել իրր օթարան վանականաց...»[2]։

Սակայն, դժբախտաբար, մոտ երկուսուկես տարվա կարճատև կյանքից հետո, «ոմանց նախանձը և լարած որոգայթները» ստիպում են Բժշկյանին թողնել ամեն ինչ և հեռանալ համայնքից[3]։

Բժշկյանից հետո, շուրջ քառորդ դար անց, 1846 թ. միայն, Վենետիկի Մխիթարյան միաբանությունը Հ. Պետրոս Մինասյանին ուղարկում է Տրապիզոն միջնակարգ գիշերօթիկ վարժարան բաց անելու։ Մինասյանը հայտնի է իր թե՛ մանկավարժական և թե՛ թատերական գործունեությամբ։ Նա ունի բազմաթիվ հեղինակություններ, որոնցից 1845 թ. տպագրվել են «Խոսրով Մեծ» և «Սմբատ Առաջին» պատմական ողբերգություններ։ Հետաքրքրական է, որ նա մոտ տասը կատակերգություն գրել է նաև աշխարհաբար լեզվով։

Երեք ուսումնական տարի Պետրոս Մինասյանը ղեկավարում է նոր բացված գիշերօթիկ դպրոցը, ուր իրենից բացի դասավանդում են նաև Մուրադ-

---

1 Տե՛ս Բ. Սարգսյան, Երկուհարյուրամյա կրթական գործունեություն Վենետիկ Մխիթարյան միաբանության, Վենետիկ, 1936, էջ 40, և «Բազմավեպ», 1950, № 7—8, էջ 145։

2 Նույն տեղում, էջ 60։

3 Հետագայում նա իր ուսուցչական և թատերական գործունեությունը ծավալում է Ղրիմում, Ղարասուբազարում (տե՛ս Վ. Թեոդիրաշյան, «Հայ դրամատուրգիայի պատմություն», Ա հատոր, էջ 461)։

Ռաֆայելյան վարժարանն ավարտած մի քանի որակյալ դասատուներ։ Սակայն հայ-կաթոլիկ համայնքի ներսում հասունյանական-հակահասունյանական հողի վրա առաջացած երկպառակությունները պատճառ են դառնում, որ Պ. Մինասյանը ոչ միայն Վատիկանի, այլև Բուրք կառավարության աչքում դասվի «անցանկալիների» շարքը։ 1848-ին, երբ նա Պոլիս է գնում անձնական գործով, անակնկալ կերպով նրան արգելվում է Տրապիզոն վերադառնալ։

Պետրոս Մինասյանի հեռանալով դպրոցը նորից փակ է մնում շուրջ 16 տարով, որից հետո վերարացվում է Հ. Մինաս Նուրիխանյանի տեսչության ներքո և անընդմեջ շարունակում է գործել մինչև 1915-ի համազգային աղետը։

Հ. Պետրոս Մինասյանի ջանքերով Տրապիզոնում ստեղծվում է «Համազգյաց ընկերության» մասնաճյուղ[4], որն ընդգրկում է հայրենասեր և խանդավառ հայ երիտասարդների մի ջոկատ՝ առանց դավանանքի խտրության։ Այս երիտասարդները ձեռնամուխ են լինում տների մեջ ներկայացումներ կազմակերպելու գործին. «1847 թ. Մկր. Մարիամյան, Հար. Զյուպիեթյան, Պետր. Շալճյան, Պողոս Չխչխյան և Մկր. Ռաֆայելյան,— գրում է Ս. Դավթյանը,— «Ս. Դիրքն բաղված բատերախաղեր» կներկայացնեն տուներու մեջ ի Տրապիզոն։ 1856-են հետո հոն ուրիշ թատերասերք այդ ուղղությամբ կհարատևեն, առաջնորդ ունենալով Սերովբե Անուշյանը»[5]։

Թատերական այս նախաձեռնությունները հետագայում շարունակվում են ավելի կազմակերպված ձևով։ 1855—60-ական թվականներին արդեն քաղաքում գոյություն ուներ կես-պրոֆեսիոնալ մի թատերախումբ, որ հատուկ պատրաստված շենքում շարունակական ներկայացումներ էր կազմակերպում։ Այդ ներկայացումների մասին մի թղթակցության մեջ կարդում ենք. «Թատրոնին մեծ օգուտները տեսնելով հոս ալ քանի մը աշխույժ պատանիներ մասնավոր ընկերություն մը կազմեցին ու թատեր մը ամենն պետք եղած զարդերը պատրաստելով թատրոն մը բացին, ուր նոյեմբ. 12-են իվեր ամեն գիշեր բացի հինգշաբթի օրերե, իրենց խաղերը կներկայացնեն, շարաթը մեկ օր մ'ալ հատկապես կանանց համար։ Առաջին անգամ ներկայացուցած խաղերնին էր «Դեկոս և Մանլիոս». երկրորդ անգամ «Սոկրատ» ու երրորդն էր «Ունճէռ». այնպես որ անցյալ շաբթու այս երեք ողբերգությունները տաճկերեն խոսակցությամբ ալ ներկայացուցին։ Ամեն գիշեր ամեն ազգերե մեծ բազմություն մը հոնտեղ կտեսնվի, շատ ատեն նստարանները ու աթոռները լեցվելեն ետքը շատերն ալ ոտքի վրա կմնան։ Տեղական իշխանության պաշտոնատարները, քաղաքիս Վսեմ կուսակալին որդին ու փեսան, ու քրիստոնյա տերության հյուպատոսները իրենց ներկայությամբ պատվեցին այս հայ թատրոնը»։

Ապա թղթակցության հեղինակը շարունակում է. «Ամսույս 26 շաբաթ իրիկվընե իվեր ալ «Օրվանդ» ազգային ողբերգությունը կը ներկայացնեն, և ամեն իրիկուն հուսացվածեն ավելի է Հայոց ազգիս բազմությունը։ Արդարև զարմանալի է տեսնալ, որ Տրապիզոնի նախկին երկպառակյալ հայերը մեծ ու պզտիկ, հարուստ և աղքատ հոն ժողվված պատանի դերասանները կքաջալերեն ու կհայտնեն իրենց հաճությունը։ Թեպետև այս առաջին անգամն է, որ Տրապիզոնի մեջ ՀԱՅ թատրոն մը կրացվի, սակայն հոն ներկայացողը երեք չորս տարի շարունակված թատրոն մը կկարծեն» և այլն։

---

4 Պոլսում, 1846 թ. դարձյալ ինքն է եղել «Համազգյացի» հիմնադիրը Մ. Պեշիկթաշլյանի աջակցությամբ։

5 Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1926, էջ 399 (ընդգծումը մերն է.— Ա. Կ.)։

Հոդվածագիր Խ. Ա. Էլմասյանի այն խոսքը, թե «քանի մը աշխույժ պատանիներ (իմա՛ երիտասարդներ) մասնավոր ընկերություն մը կազմեցին և թատրոն մը բացին» վերաբերում է «Կրթասիրաց ընկերությանը», որ 1864 թ. Պոլսից հատուկ հրավիրում է Թովմաս և Պայծառ Ֆասուլյաճյան ամուսիններին, Տրապիզոնում արդեն գործող թատերախմբի դերասաններին պրոֆեսիոնալ ուղղությամբ կատարելագործելու նպատակով, Ֆասուլյաճյան ամուսինները մոտ երկու տարի մնում են Տրապիզոնում, կազմակերպելով մի շարք ներկայացումներ և 1865-ի վերջերը մեկնում են Կովկաս, այնտեղից էլ Ռուսաստանի վայրերը։

Հիշյալ ներկայացումների շարքը մեծ հետաքրքրություն է առաջացնում ոչ միայն համայնքի հայ հասարակության, այլ նաև եվրոպացի փոքրաթիվ գաղութին պատկանող հանդիսատեսների մեջ (հյուպատոսներ, միսիոներներ, բժիշկներ, դեղագործներ և այլն՝ իրենց ընտանիքներով)։ [Հույները, որոնք իրենց թվական քանակով գրեթե միշտ երկու անգամ ավելի են եղել հայերից, տարիների ընթացքում, տեղական ուժերով ոչ մի թատերախումբ չեն ունեցել, ոչ մի ներկայացում չեն կազմակերպել, ոչ իսկ գեղարվեստական երեկույթներ, համերգներ կամ նվագահանդեսներ, որոնք հաճախակի են տեղի ունեցել հայ արվեստագետների նախաձեռնությամբ]։

Սակայն, դժբախտաբար, «Կրթասիրաց ընկերության» դրամական վիճակը օր-օրի վատթարանում է, իսկ տեղացի հարուստները չեն մտահոգվում այս ազգօգուտ ձեռնարկը նյութապես ապահովելու. և թատերական անընդմեջ գործունեությունը վերջիվերջո կանգ է առնում, տեղի տալով պարբերական ներկայացումների»[6]։

Ներկայացումները դադարելու փաստը, ըստ երևույթին, կապված պիտի համարել ավելի լուրջ պատճառների հետ, քան հարուստների անտարբերությունն էր։ Բանն այն է, որ հասարակության մեջ խոր դանդատներ են առաջանում այն մասին, թե առաջավոր հայ երիտասարդությունը շատ ավելի տարված է թատրոնի բարգավաճման հոգսերով, քան դպրոցի։ Այդ են վկայում Պոլսի տարբեր թերթերում տպագրված մի քանի հոդվածներ։ Ահա ինչ է գրում «Մասիսը» 1863 թ. «Տրապիզոնեն նոյեմբ. 26 թվով մեզ գրված նամակի մը մեջ կկարդանք թե հիշյալ քաղաքին մեջ անցյալ տարվընե իվեր սկսած Լուսինյաս թատրոնը այս տարի դարձյալ օգտավետ և զբոսեցուցիչ։ Ներկայացումներով Տրապիզոնի հայ հասարակությունը զբոսցնել սկսեր է, և ամեն գիշեր 150—250 հանդիսական պակաս չեն ըլլար եղեր. ինչպես որ ամսույս 23-ին շաբաթ երեկոյին տեղվույն կուսակալն և Բաթումի գայմագամ պեյն և ուրիշ բազմաթիվ պատվավոր անձինք իրենց ներկայությամբ պատվեր են հիշյալ հայ թատրոնը։

Տրապիզոնի մեջ հայ թատրոն մը ուրախալի բան է արդարև, բայց չենք կրնար ուրանալ, որ կանոնավոր և բարեկարգ վարժարան մը,՝ որուն օգուտներն անկշռելի են, դժբախտաբար կպակսի Տրապիզոնի մեջ... Ցավալի՜ ճշմարտություն...»[7]։

Նույն հարցն է սրվում նաև մի այլ թղթակցությունում, ուր հոդվածագիրը թատերաշրջանի վերջին ներկայացմանը՝ «Երվանդ» պատմական ողբերգության առիթով, բարձր գնահատելով հանդերձ դերակատարների ցուցաբերած հաջո-

6 «Մասիս», 1863, հունվարի 30։
7 «Մասիս», 1863, դեկտեմբերի 7։

ղությունները և հատկապես առանձնացնելով Ստեփան Հովսեփյանի և Մեսրոպ Վարդիկյանի հմայիչ խաղերը, ավելացնում է. «Տրապիզոնի ազգայնոց մեջ տեսնված թատերասիրության այս նոր եռանդն իրենց միակ դպրոցին անխնամ վիճակը միտքերնիս կձգե։ Ըստ մեզ, ավելի մեծ, ավելի ճշմարիտ և ավելի արդյունավոր ազգասիրական գործ մը ըրած կըլլան, եթե նույնչափ եռանդ ալ իրենց զավակաց կրթությանը նվիրեն, որ թատրոնեն բյուրապատիկ ավելի հարկավոր է իրենց»[8]։

Նման արդարացի տրտունջներն ու բողոքները կգալի ահազանգ են դառնում, որպեսզի Տրապիզոնում մեծամասնություն կազմող հայ-լուսավորչական համայնքի ղեկավար մարմինները հատուկ ուշադրություն նվիրեն քաղաքի միակ Ազգային վարժարանն աննախանձելի վիճակից շուտափույթ դուրս բերելու և նրա կրթական մակարդակը բարձրացնելու անհետաձգելի հարցին։

Արդյունքը լինում է այն, որ Տրապիզոնի ազգային վարժարանի 1865 տարվա ուսումնական շրջանը վերսկսվում է Պոլսից հրավիրված երիտասարդ և բազմակողմանի զարգացման տեր Ներսես Մեզպուրյանի տնօրինության ներքո, որը միաժամանակ ստանձնում է նաև մի քանի կարևոր առարկաների դասավանդումը։

Ներսես Մեզպուրյանը այն երիտասարդ մտավորականներից էր, որոնք ժամանակաշրջանի կրթական-լուսավորական գործի անխոնջ մշակներն ու հուսալի պատվանդաններն էին (Եղիա Տեմիրճիպաշյանը, Մատթեոս Մամուրյանը, Տիգրան Սեթյանը և ուրիշներ)։ Նա կարողանում է շատ կարճ ժամանակի ընթացքում 800-ի մոտ աշակերտություն ունեցող Տրապիզոնի ս. Լուսավորիչ ազգային երկսեռ վարժարանը դնել արժանի բարձրության վրա։ Այս փաստը մեծ գովեստներով է նշում Պոլսի և Զմյուռնիայի գրեթե ողջ առաջավոր մամուլը։ «Տրապիզոնեն հասած գրություններե կը տեղեկանանք,— գրում է Պոլսում հրատարակվող «Ժամանակ» թերթը,— որ Խրիմյան Մկրտի։ Հայրը հոն հասնելուն պես, փութացեր է այցելություն ընել վարժարանին, և աշակերտաց վիճակը քննելով, շնորհակալ եղեր է ուսումնասեր տրապիզոնցվոց, և բարեջան դասատուին Մեզպուրյան արժանահարգ Ներսես աղային, որ ամենայն անձնվիրությամբ կաշխատի ի հառաջադիմություն և ի բարեկարգություն վարժարանին»[9]։

Իր մանկավարժական գործունեությանը զուգընթաց, Մեզպուրյանը զգալիորեն զարկ է տվել նաև Տրապիզոնի թատերական կյանքին։ 1865 ուսումնական շրջանի ավարտից հետո Տրապիզոնի ազգային դպրոցի սրահում կազմակերպված հանդեսում, աշակերտական ուժերով և Մեզպուրյանի ղեկավարությամբ ներկայացվում են նրա գրչին պատկանող «Չորս օրիորդք կամ ուսումնատենչք և ուսումնատյացք» երեք գործողությամբ թատերախաղը և «Դավիթ հայ իշխան, կամ հայրենասիրության մեջ ճիգ մըն ալ» ողբերգությունը[10]։

---

8 «Մասիս», 1863, 23 փետրվարի։

9 «Ժամանակ», 1865, № 65։

10 Առաջին թատերախաղը 1862 թ. առաջին անգամ խաղացվել է Պոլսում, Գում-Գարուի «Դուրսի թաղի» երկսեռ վարժարանում և մեծ ընդունելություն է գտել։ Թատերախաղը կրկնվել է «ի ներկայության աշակերտուհյաց մայրերուն ալ»։ Երրորդ անգամ նույնը ներկայացվել է «մայրաքաղաքի զանազան թաղերեն բազմաթիվ ուսումնասեր տիկնանց խնդրանքով»։ Ներկա է եղել նաև «Արևելյան թատրոնիս առաջին դերասանուհի Արուսյակ Փափազյանը, որ դերակատարուհիներից մեկի «խաղին շատ հավնելով ծաղկյա պսակ մը նվիրեր է իր ձեռքը»։

Երկրորդ ուսումնական տարվա ընթացքում, Տրապիզոնի ազգային դպրոցում հաջորդաբար կազմակերպված մի քանի հանդեսներում, ուշադրության է արժանանում Վարդանանց տոնի առթիվ խաղացված, նույնպես Մեզպուրյանի հեղինակությունը եղող «Վարդանա հայրենասիրությունը և Վասակա ուրացությունը» անվամբ ողբերգությունը՝ գրված աշխարհաբար ոտանավորով[11]։

Երկու տարի Տրապիզոնի ազգային երկսեռ վարժարանում պաշտոնավարելուց հետո, Ներսես Մեզպուրյանը 1867-ին անակնկալ կերպով որոշում է ուսուցչական ասպարեզը ընդհանրապես թողնել և Փարիզ գնալ բժշկություն սովորելու։

Մեզպուրյանի հեռանալով, թեպետ Տրապիզոնի հայ հասարակությունը զրկվում է բանիմաց և հեղինակավոր մի մանկավարժից, հասարակական գործչից, թատերական շարժումը խթանող խանդավառ երիտասարդից, սակայն մշակույթի անդաստանում նրա սերմանած առողջ հատիկները կարճ ժամանակի ընթացքում տալիս են իրենց օգտաշատ բերքը։ Նրանից հետո էլ քաղաքում միասնական ուժերով հաճախակի կազմակերպվում են դասախոսություններ, երեկույթներ, գրական ասուլիսներ, նվագահանդեսներ և ներկայացումներ, որոնց գեղարվեստական որակը զգալապես տարբերվում է նախկինների որակից։ Փոխվել էր ժամանակը և ժամանակի հետ փոխվել էին նաև էսթետիկական ըմբռնումները։

Բայց ահա վրա է հասնում արյունոտ թվականը, որը հայտնի է «ջարդի տարի» անունով։ Դա 1895—96-ի մահատարած թվականն էր...

Բնաշխարհի հայության վիճակված սոսկալի աղետից զերծ չեն մնում նաև Տրապիզոնի հայերը, որոնցից հազարի չափ մարդիկ, առանց սեռի և տարիքի խտրության, սրախողխող եղան սուլթան Համիդի հրամանով։ Ազգային ահավոր վիշտը և դրա հետ մեկտեղ հավանական նոր արհավիրքների երկյուղը թույլ չտվեցին, որպեսզի նախկին հոգեշեն կյանքը շարունակվեր Տրապիզոնում։ Դադարեցին երեկույթներն ու ներկայացումները, անհետացավ ծիծաղը, լռեցին երգերը, լռեց կենդանի խոսքը. ամենաանզուսպ երիտասարդներն անգամ ինքնակամ կերպով փականք դրին իրենց բերաններին։ Բարեբախտաբար դա երկար չտևեց և 1898-ին արդեն վերսկսվում է նաև գավառի թատերական կյանքը։ Դրա մասին է պատմում Պոլսում հրատարակվող «Արևելք» թերթի 1898 թ. դեկտ. 29-ի համարում Վարդ ստորագրությամբ տպագրված «Թատրոնը Տրապիզոնի հայերու մեջ» վերնագրով հոդվածը։ Նրա հեղինակը դրվատական խոսքեր ասելով հանդերձ անցյալում «Կրթասիրաց ընկերության» ջանքերով ստեղծված ազգային թատրոնի հասցեին, այն համեմատում է նոր ստեղծված թատերախմբի հետ, և գտնում է, որ վերջինս անհամեմատ ավելի բարձրորակ է։ «Այս անգամ սկսնակներ չեն գործին ձեռնարկողները,— վկայում է հոդվածագիրը,— անոնց

---

11 Ավելորդ չէր լինի հիշատակել նաև այն փաստը, որ Ներսես Մեզպուրյանի դրչին է պատկանում «Ո՜վ մեծասքանչ դու լեզու, ո՜վ հեշտ բարբառ մայրական» հանրահայտ երգի տեքստը, որը բանաստեղծական բարձր շնչով և անկեղծ զգացումով է գրված։ Սույն բանաստեղծությունը, որ հայոց լեզվի դասագրքերի և երգարանների մշտական զարդն է կազմել, ներշնչել է անմահ Կոմիտասին, հետագայում մի նոր երաժշտություն հորինել նրա տեքստով, դոյություն ունեցող նախկին երաժշտությունը բանաստեղծության ոգուն համահնչյուն չդտնելով։ (Տե՛ս Թեոդիկի «Ամենուն Տարեցույցը», 1915, էջ 247)։

շատերը արտասահմանյան կրթություն մ' առած անձնավորություններ են, թատրոնին վրա խորունկ ու լայն գաղափար ունեցողներ, որոնք եվրոպական կորիֆեյներ տեսեր են։ Պարզ դերակատարներ չեն, երազողներ են, դեպի գեղարվեստական նպատակը ձգտողներ, որոնք արվեստին նրբություններուն մեջ խորունկ զգայնությամբ մը թափանցեր են։ Անոնց մեջ գտնվեցան անանկներ, որոնք թերևս տաղանդներ էին գավառական անկյուն մը մնացած»։ «Անոնք,— շարունակում է հեղինակը,— որ բարեբախտությունը ունեցեր են այդ ժամանակվան մարդը ըլլալու, միշտ քաղցր հուզումով մը կհիշեն Բեթերսը (Մկրտիչ Երեմյան) իբրև կատակերգու, ու մանավանդ Միճեսիմյանը իբրև ողբերգու։ Բնավ չպիտի մոռնամ իր վերջին խաղը Արիսդոտեմի դերին մեջ։ Բժիշկները այն ատեն արգելեր էին իրեն բեմ բարձրանալ, սակայն ընկերներուն թախանձանքներուն չդիմանալով, և մանավանդ քանի որ իր չմասնակցելովը ներկայացումը պիտի խափանվեր, կորոշե վերջին անգամ մըն ալ խաղալ։

Ձմեռ գիշեր մըն էր։ Հակառակ տեղացող անձրևին ու ցուրտին ահագին բազմություն մ' արդեն կանուխեն գրաված է թատերասրահը։ Ամեն մարդ անհամբեր հետաքրքրությամբ վարագույրին բացվելուն կսպասե, որ վերջապես չուշանար։ Միճեսիմյան Կարապետը կերևա սովորականեն ավելի դժգույն դեմքով մը, բայց հիանալիորեն խրոխտ։ Ամբողջ դահլիճը սկիզբեն մինչև վերջը կը հետևի անոր խաղին։ Վերջին արարվածեն ետքը, երբ հուսահատ ու լքված Արիսդոտեմը տխուր ձայնով իր աղջկան գերեզմանին վրա կիյնար, բազմության մեծ մասը իր աչքերը կսրբեր։

Այդ վերջին խաղեն ետքը Միճեսիմյանը երկար չապրիր ու իրեն հետ թատերական գործն ալ գրեթե կմեռնի»[12]։

Տրապիզոնի թատրոնի այդ շրջանի գործունեության մասին ուշադրավ վկայություն կա նաև «Բազմավեպում»։ «Ազգային թատրոն ի Տրապիզոն» վերնագրով հոդվածում հաստատվում են «Արևելքի» թղթակցի խոսքերը Կարապետ Միճեսիմյանի և Մկրտիչ Երեմյանի (Բեթերս) դերասանական կարողությունների մասին, և ապա ավելացվում, որ «իրոք այս երկու դերասանները անմոռանալի հիշատակ թողուցեր են Տրապիզոնի հայ հասարակության մեջ»։ Հոդվածագիրը հիշատակում է նաև թատրոնի «մեծ գործիչներեն» մի քանիսին, զորօրինակ Հեքիմյան Կոմիտաս էֆենդին, հանրածանոթ Մարիմյան Պետրոսը, Հմայակ Գուշպուլյանը[13]։ Առաջինք և ասոնք չէին հասարակ դերասաններ, այլ ամենն ալ թեև պատվավոր պաշտոններու տեր, բայց ի սեր ազգային կրթարաններու, մանավանդ նվիրական գործունեության, տարեկան ձմեռ եղանակին ներկայացնեին ազգային ողբերգություններ։ Այս դերասանները վարձք մը չունեին, այլ հավաքյալ դրամն կգործածվեր ի նպաստ հիշյալ ազգային գործերուն։

---

12 «Արևելք», 1898, 29-ին դեկտեմբերի։

13 Հեքիմյան Կոմիտասը հայտնի թատերական գործիչ և դրամատուրգ Սրապիոն Հեքիմյանի ազգականներից է։ Մարիմյան Պետրոսը ոչ անհայտ հասարակական գործիչներից է, միաժամանակ հեղինակ և հրատարակիչ։ Հմայակ Գուշպուլյանը (Խուլպուլյան) ծնվում բարձրագույն կրթություն ստանալուց հետո 1909 թ. Տրապիզոնի ազգային երկսեռ վարժարանների տնօրենն է եղել։

Թատրոնս, որ Տրապիզոնի հայոց մտքին և բարուն գործին, կազդուրիչ սնունդն էր, կդադրի Բեթերսի հեռանալովն և Միճեսիմյանի մահվամբ»[14]։

Քաղաքային թատրոնի աճին զուգահեռ շարունակվում էին նաև աշակերտական ներկայացումները թե ազգային լուսավորչական և թե Մխիթարյան վարժարաններում, ըստ որում հարկ է ընդգծել, որ հայ թատրոնի նշանավոր դերասաններից շատերը, ինչպես Ադամյանը, Փափազյանը և ուրիշներ, իրենց առաջին քայլերը սկսել են դպրոցական ներկայացումներից։ Նույն ձևով Տրապիզոնցի դերասաններից Կարապետ Գալֆայանը, Լաքքան, ժողովրդական դերասան Ցոլակ Ամերիկյանը և տողերիս ստորագրողը, իրենց դերասանական նախափորձերը դարձյալ սկսել են դպրոցական ներկայացումներում. առաջին երեքը Մխիթարյան վարժարանում, իսկ վերջինը Ազգային լուսավորչական վարժարանում։

Այս է ընդհանուր պատկերը (հավանաբար ոչ լրիվ) մինչև 1908 թ. Տրապիզոնի հայ համայնքում նշվող թատերական կյանքի։ Սրանից հետո սկսվում է մի նոր շրջան, որը սկզբնավորվում է 1908-ի Օսմանյան առաջին հեղափոխությունից հետո, երբ համիդյան բռնակալության տապալման շնորհիվ ստեղծվեցին թերթեր, պարբերականներ, կազմվեցին միություններ, ընկերություններ, նախկինում ընդհատակ մտած քաղաքական կուսակցությունները լեգալ հայտարարվեցին։ Իրար հետևից հրապարակ եկան նաև պրոֆեսիոնալ և սիրողական թատերախմբեր։

Տրապիզոնում բացվեց (ավելի ճիշտ վերաբացվեց) անժամանակ օրերից փակ մնացած, հայոց առաջնորդարանի դիմացը գտնվող և ազգապատկան կալվածի մաս կազմող Ակումբի շենքը։ Այդ ընթերցարան-ակումբում տեղի էին ունենում արվեստի, գիտության և գրականության հարցերի շուրջ կազմակերպված դասախոսություններ, ասուլիսներ, որոնք հաճախ վերջանում էին գեղարվեստական բաժնով, ուր կատարվում էին մեներգեր, նվագ և արտասանություններ. երբեմն էլ ներկայացվում էր մեկ կամ երկու գործողությամբ կատակերգություն։

1908-ի աշնանը Կովկասից Տրապիզոն ժամանեց հայտնի երաժշտագետ և խմբավար Գրիգոր Սյունին (Միրզայան), որ տեղական ուժերից 60 մարդուց բաղկացած քառաձայն խումբ պատրաստելով, տվեց մի քանի համերգներ, որոնք անասելի ոգևորություն առաջացրին ոչ միայն հայերի, այլև հույների և թուրքերի մեջ։ Նա համերգներ կազմակերպեց նաև Կիրասոն և Սամսոն ծովեզերյա քաղաքներում[15]։

Նույն տարում քաղաքում կազմակերպվեց լարային մի նվագախումբ, որի ղեկավարն էր բժիշկ Ե. Մինասյանը։ Կային նաև առանձին նվագողներ, որոնցից իր բացառիկ տաղանդով աչքի էր ընկնում ջութակահար Հարություն Արղումանյանը։ Նա բացի նվագախմբի առաջին ջութակը լինելուց, քաղաքում տվել է նաև առանձին համերգներ։

---

14 «Բազմավեպ», 1899, № 2, էջ 87։ Այս հատվածում մեր ընդգծած «Նվիրական գործունեության», «Թարուն գործին» արտահայտությունները իմ կարծիքով պետք է հասկանալ ազգային-ազատագրական տայքարի նպատակին հատկացված դրամական ֆոնդը։

15 Դ. Սյունին 1910-ին, Տրապիզոնից մեկնեց Կարին, ուր Սանասարյան վարժարանում դասավանդեց մինչև 1914 թ., ապա վերադարձավ Թիֆլիս, ուր երգեցիկ խմբեր և սիմֆոնիկ նվագախումբ ղեկավարելուց հետո, 1920—21 թ. մեկնեց Պոլիս, այնտեղից էլ Ամերիկա։

1911 թ. Տրապիզոն ժամանեց հայտնի ջութակահար, ընիկ տրապիզոնցի, Դավիթ Դավիթյանը, որի երկու համերգները (Կոստաքիի թատրոնում) բարձր գնահատվեցին տեղական հայ և օտար մամուլի կողմից։ Համերգներում Դավիթյանը նվագեց նաև իր ստեղծագործություններից երկու կտոր։

Երաժշտական խմբերի կողքին քաղաքում կազմվեց բավականին լուրջ հիմքերի վրա դրված սիրողական մի թատերախումբ, որի ռեժիսյորն էր լուսանկարիչ և ոչ-պակաս մտավորական Խաչիկ Զոլաքյանը, որը և կատարում էր հայրերի դերերը։ Թատերախմբի կազմումն էին Զարեհ Մեղավորյանը, Արամ Սարյանը, Նազարեթ Գևորգյանը, Տիգրան Բաբերդցին, Արամ Որբերյանը (Էքսուզյան), Լևոն Տիրատուրյանը, Երվանդ Մուքաֆյանը, Հակոբ Սրապյանը, Մանուկ Սուրբլուսյանը, Արշավիր Էլյանը, Նշան Խանճյանը, Երվանդ Թորոսյանը, ես և դեռ ուրիշ մի քանիսը։ Կին դերակատարներից էին Գոհարիկ Խանեստանյանը, Սիրանուշ Մարկոսյանը, Գեղանուշ Էլյանը, Արտեմիս Այնաճյանը, Գոհար Գաբրիելյանը և ուրիշներ։

Թատերախմբի ադմինիստրատորն էր Պողոս-Տիզրանը (Վահանյան), որ Բաթումիից էր եկել Տրապիզոն (իր ծննդավայրը) և գրեթե մշտապես թատրոնի գործերով զբաղվող ակտիվ մի մարդ էր։ Թատերախումբը ներկայացրել է հետևյալ պիեսները. «Արցունքի հովիտ» (Ահարոնյանի), «Պատվի համար», «Արմենուհի», «Նվգինե», «Շարլատանը» (Ալ. Շիրվանզադեի), «Մարվող ճրագներ» (Ալ. Արելյանի), «Ճամբուն վրա», «Ես մարդը» (Լ. Շանթի), «Ավարայրի Արծիվը» (Սմ. Բյուրատի), «Լքյալ ընտանիքը», «Շրջանավարտ օրիորդը» (երկուսն էլ Տիգ. Միրիճանյանի)։ Կոմեդիաներից խաղացել ենք «6½ պորտի ժառանգությունը», «Ես մեռա», «Երկու տիրոջ ծառա», «Նշանածներ» և այլն։

Այս բոլոր ներկայացումները տեղի էին ունենում Տուզլի Զեշմեի թատրոնում, որը կառուցել էր տվել քաղաքում հայտնի հույն մեծահարուստ Կոստաքին։

Թատերախմբի պարբերական այս ներկայացումները մեծ հետաքրքրություն էին զարթեցրել հատկապես քաղաքի երիտասարդության մեջ և վայելում էին նրա բարոյական օժանդակությունը։

1913 թ. սիրողական ուրիշ մի խումբ, ուսուցիչ Գարեգին Կողիկյանի (Եսալեմ) ռեժիսյորությամբ բեմադրեց երկու պիես՝ «Կործանվածը» (Շիրվանզադեի) և «Ձեռքերը վեր» չորս գործողությամբ դրաման (Փարամազի)։ Այս ներկայացումներին մասնակցում էին Արշավիր Սոլախյանը, Վարդան Նարլյանը, Հակոբ Սարյանը, Հմայակ Գումրուլյանը, Գևորգ Հակոբյանը, Ահարոն Եսայանը, Գուրգեն Սարգսյանը, Սահականույշ և Տիգրանուհի Նարլյանները, Արշալույս Հակոբյանը, Լուսին Թաշճյանը և ուրիշներ։

Տեղական սիրողական խմբերից բացի դաստրոլային խմբերից հարկ է հիշել հետևյալները. 1908-ի աշնան սկզբներին Կովկասից Պոլիս գնալու ճանապարհին Տրապիզոն ժամանեց Արելյան-Արմենյան թատերախումբը, որը բեմադրեց «Պատվի համար» և «Արցունքի հովիտը»։ Հաջորդ տարվա թատերական սեզոնում ժամանեց Զարիֆյան-Սևումյան խումբը, որի առաջին ներկայացումը եղավ «Ժան Ռուլը», իսկ երկրորդը՝ Սարդուի «Հայրենիքը»։

Վերոհիշյալ երկու թատերախմբերն էլ անօրինակ ոգևորություն և զմայլանք առաջացրին Տրապիզոնի հայ գաղութի ողջ հասարակության մեջ, որն ամբողջ իր կյանքի ընթացքում չէր տեսել մայրենի լեզվով խաղացող պրոֆեսիոնալ դերասանների այսպիսի կատարյալ մի անսամբլ։

Տրապիզոն են եկել նաև դերասաններ Ենովք Շահենը, Աշոտ Մադաթյանցը և Լաքքան, որոնք տեղական ուժերի օժանդակությամբ ունեցել են մի քանի ելույթներ։ Հիշատակենք նաև Մարտիրոս Մնակյանի և Հարություն Ալեքսանյանի գաստրոլային ներկայացումները, թեպետ դրանք եղել են թուրքերեն լեզվով։

Տրապիզոնում թատերական այս խանդավառ և անընդմեջ գործունեությունը, և ընդհանրապես մշակույթի բոլոր մյուս բնագավառների բարգավաճ կյանքը, մի օր ցավալիորեն վերջ գտավ թուրքական աննախընթաց եղեռնագործության պատճառով, որը դավադրաբար գործադրվեց Թուրքիայում ապրող ողջ հայերի նկատմամբ, և որը հայտնի է 1915-ի Համազգային Աղետ անունով։ Սակայն արևի և լույսի ծարավի տրապիզոնցի հայերի մնացած զավակները մի տարվա ահեղ լռությունից հետո նորից առիթ ունեցան վերսկսելու մշակութային կյանքը։ 1916-ի գարնանը, երբ ռուսական բանակը գրավեց Տրապիզոնը, վերապրող հայերս թվով ընդամենը 700—800 մարդ, նախկին 20.000-ի փոխարեն, կարճ ժամանակի ընթացքում նախկին աղջկանց վարժարանի շենքում բաց արինք մի որբանոց-դպրոց, ապա նաև նախկին ազգային լուսավորչական վարժարանը, ուր հաճախել սկսեցին 60—70 աշակերտներ։

Սրան զուգահեռ վերաբացվեց նաև Մխիթարյան վարժարանը (գիշերօթիկի բաժանմունքով) Հ. Տիմոթեոս Տեր-Կյուլյանի տնօրինության ներքո։ Այստեղ ևս սովորում էին նույնպես 50-ի չափ երկսեռ աշակերտներ։

Տրապիզոնի գրավման հետ քաղաքում արագ կերպով սկսեց աճել կյանքը։ Բանակի դեպի Սամսոն շարժվելու շնորհիվ Տրապիզոնի թիկունք դառնալու հանգամանքը հնարավորություն էր ընձեռել մի խումբ ռուս, հայ և վրացի առևտրականներին խանութներ բաց անել քաղաքում։ Սկսել էր արդեն աշխատել քաղաքի միակ կինոթատրոնը, իսկ արագ կերպով կառուցվում էր փայտաշեն մի նոր թատրոն ևս 1000 տեղանոց։ Այս փայտաշեն նորավարտ թատրոնում 1916-ի ձմռանը կազմակերպվեց մի մեծ գեղարվեստական երեկույթ, ուր ռուսերեն լեզվով ներկայացվեց «Աիդա» օպերայից մի պատկեր։ Նրա բեմադրողը Մելիք-Փարսադանյան ազգանունով մի հայ պինվորական էր։ Նույն գիշերը ներկայացվեց (նույնպես ռուսերեն լեզվով) մի վոդևիլ, ապա «Կըրթ-կըրթ» վավեշտը, որին մասնակցողները գրեթե բոլորն էլ հայեր էին։ Երկրորդ բաժնում տեղի ունեցավ ռուս, հայ, վրացի երգեցիկ խմբերի ելույթները[16]։

1917-ի վերջերին ռուսական բանակի Տրապիզոնից ետ քաշվելու և թուրքերի կրկին այնտեղ վերադառնալու փաստը ստիպեց նորակազմ փոքրիկ հայ համայնքին հեռանալ քաղաքից և գնալ հաստատվել սևծովյան մոտակա առափնյա քաղաքներում, գլխավորապես Բաթումիում և Սուխումիում, ուր ստվար թվով տրապիզոնցի հայեր նախապես արդեն ապրում էին։

---

6 1908 թ. Դրիգոր Սյոմնիի խմբում երգած լինելուս հանգամանքը հնարավորություն տվեց ինձ Մխիթարյան դպրոցի (որտեղ ես ձրի դասավանդում էի հայերեն լեզու և պատմություն) իմ սաներից կազմել եռաձայն երգեցիկ մի խումբ։ Զարմանալի հաջողություն ունեցավ մեր խումբը, որի յուրաքանչյուր երգը որոտընդոստ ծափահարություններով էր դիմավորվում։ Թերևս դրա գլխավոր պատճառն այն էր, որ խմբի մասնակիցները բոլորն էլ մանկահասակ աշակերտներ էին աղետից հրաշքով ազատված։